ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

ARMENIAN APOSTOLIC CHURCH
ARARATIAN PATRIARCHAL DIOCESE
VICAR

« 11 » 02. 2019 թ. N 58

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

Մեծարգո տիար Մարության,

Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդական միությունները 2019 թ. մարտի 3-ին ծրագրել են Բուն բարեկենդանին նվիրված տոնախմբություններ:

Այդ շրջագծում թեմի երիտասարդները մարտի 3–ին կազմակերպել են դիմակներով երթ (մասնակիցներ՝ շուրջ 3000 հոգի, կարգադրիչներ՝ 40): Այն կսկսվի ժամը 14:00-ին՝ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցուց և կընթանա Մեսրոպ Մաշտոցի անվան պողոտայով դեպի Ազատության հրապարակ, ուր նախատեսվում են մի շարք տոնական միջոցառումներ: Միջոցառումը կավարտվի 17:00-ին: Խնդրում ենք Ձեր թույլտվությունը և աջակցությունը՝ վերոնշյալ միջոցառումների անցկացման և կազմակերպչական հարցերի իրականացման համար.

1. Դիմակներով երթին վարչական շրջաններում տոնական միջոցառումների անմիջական մասնակիցների, ազգագրական երգի, պարի համույթների ապահովում,
2. Ազատության հրապարակում նախատեսվում են Ս. Սարգսի տոնին նվիրված նկարների, աշխատանքների ցուցահանդես-վաճառք, ազգային կերակրատեսակների ցուցադրում-վաճառք, Բարեկենդանին նվիրված ներկայացումներ, ազգային խաղեր, երգ, պար, մրցանակներ:

Ջերմագին սիրով և օրհնությամբ՝

ՆԱՎԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ

147/441

...ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
№ 19/10478 12.02.19 թ.

E-mail: ararald@arminco.com URL: www.araratian-tem.am